ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «02» 03 2016թ. № 166-Ա

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբեր 12-ի N1311–Ն որոշման 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) Ինովացիոն նախագծերի մրցույթի հայտի ձևը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Ինովացիոն նախագծերի գնահատման չափանիշները՝ համաձայն հավելված 2-ի.

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի
2016 թվականի մարտի 2-ի N 166-Ն հրամանի

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏ

1. Նախագծի անվանումը

2. Նախագծի համառոտագիրը

3. Նախագծի նկարագրությունը

4. Ինովացիոն լուծման ներկա վիճակը *(գաղափար, գաղափար՝ հիմնավորված տեսական կամ փորձնական հետազոտություններով, նախանմուշ, արտադրանք՝ շուկայում իրացվող կամ պատրաստ շուկայում իրացվելու համար)*

5. Մտավոր սեփականության իրավունքները *(արտոնագրի հայտեր, արտոնագրեր, լիցենզիոն իրավունքներ և այլն)*

6. Արդիականությունը *(նպատակային շուկաներում առաջարկվող ինովացիոն լուծման անհրաժեշտության մակարդակը, պահանջարկի ակնհայտությունն ու էլաստիկությունը, պոտենցիալ գնորդների կողմից մրցակցային առավելությունների ընկալման մակարդակը)*

7. Նորույթը *(նպատակային շուկաներում առկա նմանատիպ լուծումների առկայությունը, դրանց նկատմամբ համեմատական առավելություններն ու թերությունները)*

8. Ամբողջականությունը *(ավարտուն տեսքի բերելու համար լրացուցիչ հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) կամ այլ տեխնոլոգիաների գնման կամ տեխնիկական խորհրդատվության անհրաժեշտությունը, տեխնոլոգիական սխեմայի կամ քարտեզի առկայությունը)*

9. Բարդությունը *(խնդրի սկզբունքորեն նոր լուծում, թե առկա լուծումների բարելավում, մեծ թվով տեխնոլոգիական լուծումների համախմբություն, թե մեկ տեխնոլոգիական լուծում)*

10. Հիմնավորվածությունը *(տեխնիկական ցուցանիշներն ու պարամետրերը հիմնավորող լաբորատոր կամ փորձարարական հետազոտությունների արդյունքների առկայությունը, ոլորտի բարձրակարգ փորձագետների կամ կազմակերպությունների կողմից մասնագիտական կարծիքների առկայությունը)*

11. Գնագոյացումը *(ինքնարժեքի հաշվարկման հնարավորությունը, շուկայական գնի հիմնավորվածությունը, ինքնարժեքի նվազման վրա ազդող գործոնների հստակությունը)*

12. Նորմատիվ կարգավորումը *(համապատասխան ստանդարտների առկայությունը, լիցենզիաների, թույլտվությունների, սերտիֆիկատների անհրաժեշտությունը, նորմատիվ այլ սահմանափակումների առկայությունը)*

13. Նպատակային շուկաների գրավչությունը *(պահանջարկի պոտենցիալ ծավալը՝ դրամային ու քանակական ցուցանիշներով ըստ սեգմենտների, նպատակային շուկաների զարգացման մակարդակը (աճող, կայուն, թե նվազող), ցիկլիկ կամ սեզոնային բնույթը, նոր շուկաներ ստեղծելու հնարավորությունը)*

14. Մրցակցությունը *(նպատակային շուկաներում մրցակիցների առկայությունը, դրանց զբաղեցրած դիրքը շուկայում, ուժեղ և թույլ կողմերը)*

15. Մրցակիցների ներուժը *(մրցակիցների ինովացիոն պոտենցիալը, նյութական, արտադրական և կազմակերպչական ռեսուրսների մակարդակը, փորձառությունը և համբավը նպատակային շուկաներում, հավելյալ ծառայությունների, երաշխիքների կամ պայմանների տրամադրման հնարավորությունները)*

16. Անբարեխիղճ մրցակցությունը *(մրցակիցների կողմից կոռուպցիոն սխեմաների, փոխկապակցվածության, գնային դեմպինգի, վարչական և այլ լծակների օգտագործման հնարավորությունը)*

17. Տրանսպորտային կապուղիները *(տրանսպորտային ուղիները, ծախսերն ու ռիսկերը, պահպանման պայմաններն ու ժամկետները, մատակարարման հանգույցների առկայությունն ու որակը)*

18. Առևտրային ցանցերը *(դիստրիբյուցիոն, առևտրային ցանցերի և հարթակների, էլեկտրոնային գործարքների, շուկա մուտք գործելու վճարների առկայությունը, ուղղակի մարքեթինգի գործիքների օգտագործման հնարավորությունը)*

19. Գնահատականների հիմնավորվածությունը *(շուկայի մասնագիտական ուսումնասիրության, վաճառքի նախնական պատվերների կամ պայմանագրերի առկայությունը, վաճառքի փորձի և գնորդների հետ հետադարձ կապի առկայությունը)*

20. Համալրվածությունը արտադրատեխնիկական միջոցներով *(շենքային պայմանների, լաբորատորիաների, չափիչ սարքերի, արտադրական հաստոցների, սարքավորումների առկայությունը, նոր սարքավորումներով և այլ հիմնական միջոցներով համալրվելու անհրաժեշտությունը, արտադրությունը այլ տեղում իրականացնելու կամ պատվիրելու հնարավորությունը)*

21. Հայտատուի կայուն զարգացման ներուժը *(այլ ինովացիոն ծրագրերի կամ մշակումների առկայությունը, առևտրայնացման փորձեր կատարելու ակտիվության մակարդակը, նախագծի ազդեցությունը հետագա գիտաինովացիոն գործունեության վրա, ֆինանսական ինքնաբավության մակարդակը, ռազմավարական զարգացման ծրագրի առկայությունը)*

22. Հայտատուի ներգրավվածությունը *(նախագծի իրականացման մեջ հայտատուի սեփական ռեսուրսների ներգրավվածության աստիճանը)*

23. Համագործակցությունը այլ ինովացիոն սուբյեկտների հետ *(գիտական, արտադրական, կրթական, ինովացիոն կենտրոնների կամ առևտրային ընկերությունների հետ համագործակցության առկայությունը և դրա մակարդակը)*

24. Մասնագիտական կադրերի ինովացիոն ներուժը *(թիմում գիտական և բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունը և որակավորման մակարդակը, տարիքային կազմը, նոր մասնագիտական կադրեր պատրաստելու ծրագրերի և պրակտիկայի առկայությունը, դրանց հնարավորությունները, հորիզոնական կապերի և թիմային աշխատանքի մակարդակը)*

25. Անձնակազմի մոտիվացիան *(ինովացիոն լուծումն ապահովող մասնագետների ներգրավվածության չափը առևտրայնացման գործընթացում, անձնակազմի նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների առկայությունը)*

26. Նախագծի ղեկավարության կարողությունները *(կառավարչական անձնակազմի փորձառությունը, գիտելիքների մակարդակը, նպատակային շուկաներում ինովացիոն լուծումների առաջմղման համար անձնական կապերի առկայությունը, շուկա դուրս բերելու հստակ ռազմավարության և պատկերացումների առկայությունը)*

27. Հաշվարկային ցուցանիշներ *(ֆինանսական նախահաշիվ, ինքնարժեք, շուկայական գին, ժամկետներ)*

28. Կանխատեսումային ցուցանիշներ *(ակնկալվող վաճառքի ծավալներ, մրցակցային դիրք, եկամուտներ, շահույթ, ժամկետներ և այլ կանխատեսումային ցուցանիշներ)*

29. Արտաքին ցուցանիշներ *(նախագծի իրականացման ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման, երկրում սոցիալական նշանակության խնդիրների լուծման, շրջակա միջավայրի և բնապահպանական խնդիրների, հասարակական կարծիքի ձևավորման, երկրի ինովացիոն վարկանիշի բարձրացման, արտերկրի շուկաներում ճանաչելիության բարձրացման, տվյալ ոլորտի զարգացման, նոր գիտական և բարձրակարգ մասնագիտական կադրերի պատրաստման և կատարելագործման, վերազգային ընկերությունների հետ համագործակցություն հաստատելու, գլոբալ արժեշղթայում կայուն բարձր դիրքեր զբաղեցնելու հնարավորությունների վրա)*

30. Հայտատուի տվյալները

(հայտատու կազմակերպության անվանումը, պատասխանատու անձի անունը, ազգանունը, պաշտոնը կամ հայտատու քաղաքացու/անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, կազմակերպության գտնվելու վայրի կամ բնակության հասցեները, էլեկտրոնային հասցեն, ստացիոնար և բջջային հեռախոսները, կայքէջը)

Ստորագրություն,

Ամսաթիվ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի
2016 թվականի մարտի 2-ի N 166-Ն հրամանի

Ինովացիոն նախագծերի գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշ	**Գնահատական (0-10)**	**Կշիռ**	**Միավոր**
Առաջարկվող ինովացիոն լուծման տեխնոլոգիական ամբողջականության և նորույթի աստիճանը		0,3	
Առաջարկվող ինովացիոն լուծման արդիականության և նպատակային շուկաների գրավչության աստիճանը		0,25	
Հայտատուի ինովացիոն ներուժի աստիճանը		0,1	
Նախագծի իրականացման ազդեցության աստիճանը ՀՀ տնտեսական զարգացման և սոցիալական նշանակության խնդիրների լուծման վրա		0,15	
Տնտեսական, տեխնիկական, իրավական և այլ ռիսկերի աստիճանը		0,2	